ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խաչիկյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Առուշանյանը, Գ. Մեհրաբյանը, Հ. Ռամազյանը, Ա. Գևորգյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. **Հրատապ բաց մրցույթի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող շտկված փաստաթղթերը գնահատելու մասին**

(Ա. Խաչիկյան)

1. **Փաստաթղթերի գնահատման՝**

- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.
-օրը՝ 03.10.2019թ.
-ժամը՝ 15:00

2. Ընդունել ի գիտություն, որ «Հարությունյան Շին» ՍՊ և «ԷՄԷՆՋի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա ընկերությունների /Կոնսորցիում/-ի կողմից սահմանված ժամկետում տրամադրվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ փաստաթղթերը.

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ–0

3. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով կոնսորցիումի կողմից տրամադրված փաստաթղթերը արձանագրում է հետևյալը.

1) «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия» («ԷՄԷՆՋի Փլաստիգ-Գոգիկ» ԴՕՕ Ինջիյա) ընկերության տնօրենի կողմից ներկայացվել է տեղեկանք, որով մեկնաբանվել է, որ անհամապատասխանությունը կապված է ռուսերենից և սերբերենից հայերեն թարգմանության հետ: Սակայն անհամապատասխանություններ առկա են նաև ընկերության անվանման՝ անգլերեն, սերբերեն և ռուսերեն լեզուներով տարբերակների միջև: Բացի այդ, հայտում ներառված հայերեն փաստաթղթերում (հավելված 3, կոնսորցիումի ձևավորման վերաբերյալ պայմանագիր) կոնսորցիումի մասնակցի անվանման բաղադրիչը նշվել է «ինդիյա» և գհանատող հանձնաժողովի համոզմամբ այն առանց ուղղագրական կամ արտասանական խնդիրների նույն արտասանությամբ կարող է գրվել նաև ռուսերեն, մինչդեռ ներկայացված տեղեկանքում ընկերության անվանումը նշվել է «Инджия» (Ինջիյա): Ընդ որում այդպիսի արտասանության ճիշտ լինելու դեպքում գրառումը հայերենով կատարելը նույնպես հնարավոր էր և խնդիր չեր առաջացնում:

2) Ներկայացվել է «Սերբին» ՍՊԸ-ի կողմից տրված տեղեկանք, ըստ որի «Սերբին» ՍՊԸ-ն, հիմք ընդունելով «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.09.2019 թվականի N 3 արձանագրությունը, համաձայնել է փոփոխել և խմբագրել «Սերբին» ՍՊԸ-ի և «ԷՄԷՆՋի Փլաստիգ-Գոգիկ» ԴՕՕ Ինջիյա ընկերության միջև 10.02.2019 թվականին կազմված հանձման-ընդունման ակտը՝ «ԷՄԷՆՋի Փլաստիգ-Գոգիկ» ԴՕՕ Ինջիյա ընկերության տնօրեն «Սլոբադան Գոգիկ»-ին փոխարինելով՝ «Սլոբադան Գոգիչ»-ով և ներկայացվել է խմբագրված ակտ: Հատկանշական է, որ ըստ տեղեկանքի՝ հիմքում ունենալով ընթացակարգի հանձնաժողովի կողմից մատնանշված անհամապատասխանությունների արձանագրությունը, շտկվել է միայն ընկերության տնօրենի անունը, ազգանունը և չի շտկվել ընկերության անվանման բաղադրիչ «Գոգիկ»-ը («Гогик»-ը), թեև առկա էր դրա շտկման իրական հնարավորություն՝ հաշվի առնելով ընկերության տնօրենի ազգանվան փոփոխությունը:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը գտնում է, որ արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից չեն շտկվել և հիմք ընդունելով հրավեր 8.18-րդ կետի 2-րդ ենթակետը ու ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ

հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Հարությունյան Շին» ՍՊ և «ԷՄԷՆՋԻ Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա ընկերությունների /Կոնսորցիում/-ի հայտը և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊ և «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊ ընկերություններ /Կոնսորցիում/-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ–0

4. Գնահատող հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ–0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ա. Խաչիկյան
Անդամներ՝		Վ. Առուշանյան
		Գ. Մեհրաբյան
		Հ. Ռամազյան
		Ա. Գևորգյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան